ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ (0322)4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ 01/115.2/12181-2020
«21» 12 2020թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանին

Ի պատասխան Ձեր 14.12.2020թ-ի հարցման

Հարգելի պարոն Բալասանյան

Ձեզ եմ տրամադրում Արցախի հանրապետությունից Լոռու մարզ տարհանված ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ հարցման:

1. Լոռու մարզում Արցախից տարհանված ընտանիքների թիվը փաստացի հաշվառվելով եղել է 1032 ընտանիք և 3315 անձ: Պատերազմի ավարտից հետո, հաշվի առնելով վերադարձի հնարավորությունը, ներկա պահին մարզում բնակվում են 462 ընտանիք, 1645 անձ, որից
   Վանաձոր քաղաք – 257 ընտանիք, 952 անձ
   Գուգարքի տարածաշրջան – 35 ընտանիք, 149 անձ
   Տաշիրի տարածաշրջան – 39 ընտանիք, 95 անձ
   Սպիտակի տարածաշրջան – 55 ընտանիք, 200 անձ
   Թումանյանի տարածաշրջան – 39 ընտանիք, 127 անձ
   Ստեփանավանի տարածաշրջան – 37 ընտանիք, 122 անձ
2. Արցախի հանրապետության բոլոր համայնքներից Լոռու մարզում կան տարհանված ընտանիքներ, որոնց բաշխվածությունը ըստ համայնքների առաջարկում ենք ստանալ Միգրացիոն ծառայությունից:
3. Պատերազմի առաջին իսկ օրվանից արցախցի տարհանված ընտանիքների գերակշիռ մասը բնակեցվել է առանձին բնակարաններում և տներում: Մի մասը ժամանակավորապես հյուրընկալվել են Լոռու մարզի հյուրանոցներում, հյուրատներում, պետական ընդհանուր կացարաններում՝ թվով 20 ընդհանուր կացարան: Ներկա պահին ունենք բնակեցված մայն չորս ընդհանուր կացարան՝

կատ. Ս.Գրիգորյան
հեռ. (0322) 2-22-91

Վանաձորի մանկատուն – 19 ընտանիք, 62 անձ
Վանաձորի աջակցման կենտրոն – 3 ընտանիք, 9 անձ
Վանաձորի «J& S» հյուրանոց – 2 ընտանիք, 19 անձ
Ստեփանավանի «Գրիգ Հաուս» հյուրատուն – 7 ընտանիք, 35 անձ

Առանձին բնակարաններում ապրողների թիվը ըստ տարածաշրջանների՝
Վանաձոր քաղաք – 233 ընտանիք, 862 անձ
Գուգարքի տարածաշրջան – 35 ընտանիք, 149 անձ
Տաշիրի տարածաշրջան – 39 ընտանիք, 95 անձ
Սպիտակի տարածաշրջան – 55 ընտանիք, 200 անձ
Թումանյանի տարածաշրջան – 39 ընտանիք, 127 անձ
Ստեփանավանի տարածաշրջան – 30 ընտանիք, 87անձ

4. Համայնքային ենթակայության տարածքներում բնակեցված արցախցիների ծախսերը հոգում են տարբեր կառույցներ: Մինչ օրս պետական ընդհանուր 2 կացարանների և հյուրանոց-հյուրատների կոմունալ ծախսերը փակվել են պետության կողմից: Սննդամթերքի, հիգիենիկ և անկողնային պարագաների, հագուստի և կոշիկի, սոցիալ-հոգեբանական, առողջապահական և այլ տարբեր կարիքներ փակվել են տարբեր հովանավոր և նվիրատու կառույցների, անձանց կողմից: Դժվարությունները հիմնականում կապված են եղել առանձին բնակարաններում բնակեցված արցախցի ընտանիքների կոմունալ ծախսերի և ջեռուցման հետ: Դժվարությյուներից մեկը մարզի ներսում և մարզից դուրս արցախցի ընտանիքների տեղաշարժի արձանագրումն էր, որը հնարավորություն չի տալիս հստակ ունենալ մարզի պատկերը:
5. Նախկինում չբնակեցված կամ դատարկ տներում ապրող արցախցիները հիմնականում իրենք են լուծել իրենց կոմունալ-կենցաղային խնդիրները: Առանձին ծրագրերով ոմանց տրամադրվել է վառելափայտ, բրեկետ, վառարաններ. էլեկտրական տաքացուցիչներ:
6. Այս պահի դրությամբ որևէ ընտանիք մշտական բնակության խնդրանքով չի դիմել մարզպետարան:

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ս.Գրիգորյան
հեռ. (0322) 2-22-91